Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9824

Պրոլետարներ բոլոր յերկրների միացե՛ք։

Վ. ԱԼՈՎ

# ՎՈՋԻԼՆԵՐԻ ԴԵՄ ԿՌՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ

ՊԻԵՍ 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

891.71
Ա-33

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԿՈՊԻ"

ՅԵՐԵՎԱՆ 1925 Թ.

# ԳՆԵՑԵՔ ՅԵՎ ՏԱՐԱԾԵՑԵՔ

## ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Լույս են տեսել)

1. Տիխոմիրով.—Ինչպես անել, վոր կոոպերատիվի գործերը լավանան — գունավոր շապիկով, 32 յերես, գինն է 20 կ.
2. Կոոպերատիվի առաջին քայլերը, գունավոր շապիկով, յերես 40—գինն է 30 կոպեկ։
3. Գ. Յոլյան—Գյուղացի՛, ուժեղացրու կոոպերացիան—20 յերես, նկարազարդ շապիկով—գինն է 5 կոպեկ։
4. Հ. Տ. Մ. Ինչպես պետք է լինի կոոպերատիվի գործակատարը—22 յերես, նկարազարդ շապիկով—գինն է 8 կոպ.
5. Ինչպես պիտի հիմնել կոոպերատիվ խանութ—24 յերես, գինն է 10 կոպեկ։
6. Պոժիտնով.—Ինչպես պետք է հաշիվ տա սպառողական ընկերության վարչությունը—26 յերես, գինն է 15 կոպեկ։
7. Գ. Յոլյան—Կորչեն չարչիները — 16 յերես, պատկերազարդ, գինն է 8 կոպեկ։
8. Ճեսյն—Մուրհակը—26 յերես, գինն է 30 կոպեկ։
9. Կերժենցև. — Կազմակերպիր ինքդ քեզ—56 յերես, գինն է 35 կոպեկ։
10 Ռասրովսկայա.—Կոոպերացիան ինչո՞ւ համար է պետք գյուղացուն—գինն է 25 կոպեկ։
11. Դենիսով.— Կազմակերպեցեք խանութային հանձնաժողովներ—գինն է 20 կոպեկ։
12 [redacted]—Գյուղը, տնտեսական նոր քաղաքականությունն ու կոոպերացիան—36 յերես, գինն է 25 կոպեկ։
13. Ա. Վ. Մարտովսկի — «Խափանվեց» պիես 3 գործողությամբ—20 յերես, գինն է 15 կոպեկ։
14. Ալով—Վոջիլների դեմ կռվելու միջոցը պիես 3 գործողությամբ—32 յերես, գինն է 20 կ.
15. Դոխով.—Ինչպես հավաքել փայավճարները—24 յերես, գինն է 15 կոպեկ.
16. Գործակատարի հաշվառումը—28 յերես, գինն է կ.

---

17 JUL 2006
10 NOV 2010
891.71
Ա-33
1001
T35

Պրոլետարներ բոլոր յերկրների միացեք

Վ. ԱԼՈՎ

# ՎՈՋԻԼՆԵՐԻ ԴԵՄ ԿՌՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ

ՊԻԵՍ 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Փոխադրություն ռուսերենից

ՀԱՅ. Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՈՊ»

ՅԵՐԵՎԱՆ 1925 թ.

4 FEB 2013
9824
19 NOV 2010
008
ԼԱԼ-28

# ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

*ՍԵԹՈ.—նախկին կարմիր բանակային։*
*ՍՄԲԱԹ.—կոոպերատիվի նախագահը։*
*ՄԱԹԵՎՈՍ* } *վարչության անդամներ, կուլակներ։*
*ՄԱՐԳԱՐ* }
*ԱՐԱՄ.—կոոպերատիվի գործակատարը—հարբեցող և կոպիտ։*
*ՏԵՐ-ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱՆ.—կոոպերատիվի հաշվետարը։*
*ՊԵՏԻԿ—սազ նվագող գյուղացի յերիտասարդ—19 տարեկան, շատ ուժեղ կազմվածքով,*
*ՔՆՆԻՁԸ*
*ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՀԱՆԳԻՉԸ.—30 տարեկան։*
*ՍՈՒՐԻԿ.—Սմբաթի տղան—13 տարեկան։*
*ՄԱՐԻԱՄԸ*
*ՆԱՐԳԻԶԸ*
*I-ին ԳՅՈՒՂԱՑԻՆ։*
*II-րդ ԳՅՈՒՂԱՑԻՆ։*
*ԿԻՄ.—փոքրիկ տղա։*
*ՄԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ։*
*ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ, ԿԱՆԱՅՔ, ԾԵՐԵՐ ՅԵՎ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ։*

*Դեպքը կատարվում է մի հեռավոր ու խուլ գյուղում։*

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ԺԳառ. 167 բ    Պատվեր 5104    Տիրաժ 2000

Բեմի ձախ կողմում այգի: Բեմի խորքում, հանդիսականների դեմը՝ կոոպերատիվ խանութի մուտք «Թալանչիական կոոպերատիվ» ցուցանակով: Բեմի աջ կողմում կա մի ցանկապատ—դռնով: Բեմի խորքում, կոոպերատիվ խանութի և ցանկապատի միջև, անցնում է մի նեղլիկ ճանապարհ: Ցանկապատի և ճանապարհի հետևից ծառեր են յերևում: Խանութը փակ է. խանութի մոտ, գերանների վրա նստած՝ զրուցում են Սեթոն ու Պետիկը:

## ՏԵՍԱՐԱՆ 1.

*ՍԵԹՈ.—Այ տղա, ասում եմ ճի՛շտ է, ճի՛շտ... Լա՛վ՝ բա են թազա մարագն ո՞ւմ փողով է շինել, են յերկու կովն ո՞ւմ փողով առավ:*

*ՊԵՏԻԿ.—Դու էլ բան ասեցիր էլի՛... Աստծու կրակից շատ կարողություն ունի. էնքանն իրան բավական չի՞, վոր...*

*ՍԵԹՈ.—Դու չգիտե՞ս, վոր եզպեսներն ավելի աչքածակ են: Իրենց ունեցած փողը սնդուկներում պահում՝ ուրիշի փողն են գործի մեջ դնում, ուրիշի փողով են իրենց պակասները գցում:*

*ՊԵՏԻԿ.—Մենք էլ են պատճառով ենք դրան նախագահ ընտրել, վոր մտածել ենք, թե հարուստ գյուղացի ա՝ մեր փողերի վրա աչք չի ունենա...*

*ՍԵԹՈ.—Հենց ե՛ղտեղ է, վոր սխալվել եք: Կուլակը վոր կա՝ սարդ է: Ճանճը վոր նրա ցանցի մեջն ընկավ՝ ինչքան ծծի՝ էլի չի կշտանա: Ս՛ս՛ս՛...* (Մոտեցող մարդկանց ձայներ են լսվում. յերկուսն էլ իրենց լռությունը լարում են):

*ՍԵԹՈ.—Կարծես թե Սմբատն է գալիս...* (վազում է դե–

պի ցանկապատի հետևը)։ *Յե՛կ ե՛ստեղ, յե՛կ...* (Յերկուսն էլ թագնվում են։ Մի վորոշ ժամանակի ընթացքում բեմը մնում է դատարկ։ Բեմի հետևից ձայներ են լսվում)․ *«Հա՛, բարև՛, տեր հայր, բարև։ Ինձ մոտ եյիր գալի՞ս։ Հա—քեզ մոտ եյի գալիս»։*

## ՏԵՍԱՐԱՆ 2․

Տեր Ներսեսն ու Սմբատը դուրս են գալիս բեմ, դանդաղելով կանգ են առնում և գնում, նորից կանգ առնում և նորից շարունակում են իրենց ճանապարհը։

ՍՄԲ․—*Հը՞, վո՞նց ե, գլուխ յեկա՞վ։*

Տ․-Ն․—*Վատ ե, տղայեր, վա՛տ ե։ Վո՛նց կուզես շուռ ու մուռ տուր, վո՛նց կուզես՝ կարիր, կարկատիր, ելի էնպես ե ստացվում, վոր խանութը հարյուր հինգ մանեթ վնաս ե արել...*

ՍՄԲ․—*Կեսը քու վզին ա ընկնում, տերտեր...*

Տ․-Ն․-*Ընչի՞ յես Աստծու առաջ մեղք գործում․ դե բոլորդ էլ մասնակից եք յեղել։ Աստծն ասում ա «ձնձղուկը հատիկ-հատիկ ա կացում, համա կուտը հատացնում ա»...*

ՍՄԲ․—*Ձե՛, վոնց վոր երևում ա, շատ ենք կացել։*

Տ․-Ն․—*Դե մի լավ հաշվիր ու տես* (նայում է շուրջը և ձայնը ցածրացնում է)։ *Նոր տուն ել շինեցիր,—քար ու կիր առա՞ր... Մի հաշվիր, թե եդ ի՞նչքան ե բռնում... Սայլ սարքեցի՞ր, մի ջուխտ յեզներ առա՞ր... Դեռ յես բոլորը չեմ հաշվում։*

ՍՄԲ․—(Նույնպես շուրջը նայելով) *Լա՛վ, ի՞նչ ես իմը հաշվում, բա քո տարածը մոռացա՞ր։*

Տ․-Ն․—(Շարունակելով) *Բա են մեկել անդամնե՞րը։ Ուզես-չուզես՝ ամեն ամիս ռոճիկը պատրաստիր ու տուր... Հենց թեկուզ Մաթևոսին վերցնենք։ Ո՞ւմ*



*փողով ե շայխանա բացել։ Ելի կոոպերատիվի փողով։ Բայց ապրանքի համար փող չունենք, Հայկոպից վերցրած հին պարտքերն էլ դեռ չենք վերադարձրել։ Ձե, յես տեսնում եմ, վոր ուրիշ ճանապարհ չկա—ելի պիտի ապրանքների գներն ավելացնենք, վոր վնասը ծածկվի։*

ՍՄԲ․—*Եդ, ասենք, եդպես ե՛... Բայց մենք ապրանքների գներն արդեն հարյուր տոկոսով ավելացրել ենք ախըր...*

Տ․-Ն․—*Ե՛ ե՛ —հ...ո՞վ ա հասկացողը։ Ես որվանից էլ մի հիսուն տոկոս վոր ավելացնենք, գործը կը ծածկվի, անց կը կենա ե՛լի...*

ՍՄԲ․—*Դե վոր կը ծածկվի, թող ծածկվի։ Արամին կը պատահեմ, կասեմ, վոր գներն ավելացնի ու հետո ծախի։ Դե՞, հիմի կապալի գործը վո՞նց անենք։ Մի քիչ առաջ Մաթևոսի հետ զրույց ունեյի։ Ասում ա խանութը կապալով ինձ տվեք։ Ի՞նչ ես կարծում—լավ կըլի՞։*

Տ․-Ն․—*Մտածելու ի՞նչ կա։ Լավ կը լինի։ Ձեռնտու յե։ Խոսք ու զրույցն էլ մեր վրայից կը հեռացնենք։ Թե չե՝ ժողովրդի առաջ ամոթով կը մնանք—ինչքան չլինի՝ դե, հոգևոր հայր եմ։*

ՍՄԲ․—*Խոստանում ա, վոր ամեն մեկիս ամսական յերկու տասանոց կը տա։*

Տ․-Ն․—*Վոչի՛նչ։ Վա՛տ չի։ Մենակ թե՝ տես, չխաբի—Շատ անամոթն ե։*

ՍՄԲ․—(Ցույց տալով բռունցքը) *Բա սա քնած հո չի՞։ Մի՛ վախենա։ Չ՛ի խաբի։*

Տ․-Ն․—*Եդ եդպես ե, բայց թե՝ ո՞վ գիտի...*

ՍՄԲ․—*Տերտեր, ավելի լավ ե, եդ բոլորը մի կողմ թող, ծխվորներիդ հետ ես մասին խոսի։ Ասա մեկ ե՝ խանութից վոչ մի՛ բան չի դուրս գա... Ջուր տեղը ձեր փողն ա կորչում։ Մեր գործը չի, ասա, առև–*

տուր անելը... Դե, ինքդ ամեն ինչ լավ հասկանում ես—յես քեզ ի՞նչ խրատ տամ:

Տ.-Ն.—Շատ լավ, բա անդամներին ի՞նչ պատասխանտանք:

ՍՄԲ.—Դրա մասին ել ես մտածո՞ւմ: Մի յերկու վեդրո սպիրտակն ա ու նրանց ջանը: Թող դրանից ել շնորհակալ լինեն:

Տ.-Ն.—Պա՜հ, լավ յեղավ՝ մի՛տս գցեցիր: Գնանք, Սմբատ ջան, գնանք—Եսոր տիրուհին ենպես մի արաղ ա քաշել, վոր սպիրտից ել թունդ ա: (Խփում ե նրա փորին): Ճաշից առաջ մի յերկու բաժակ կուլ տալը տերն ինքը սահմանյալ ե: Շուտ գնանք, թե չե՝ ուր վոր ե, ժողովը կսկսվի:

ՍՄԲ.—Լավ, գնանք: Մենակ թե՝ սպասիր ես հայտարարությունը կպցնեմ: Թե չե՝ խոսելու հետ ընկա՝ քիչ եր մնում պիտի մոռանայի: (Կոոպերատիվի դռների վրա մի թուղթ ե կախում և վերադառնում են):

## ՏԵՍԱՐԱՆ 3.

ՍԵԹՈՆ ՈՒ ՊԵՏԻԿԸ ցանկապատի հետևից դուրս են գալիս և մոտենում են խանութին: 6

ՍԵԹՈ.—Հը՞, յես ի՞նչ եյի ասում. ասո՞ւմ եյի թե ես գործը շատ կեղտոտ ե: Հիմի հո հավատո՞ւմ ես:

ՊԵՏԻԿ.—Ականջովդ վոր լսես՝ ել վո՞նց չես հավատա: Ա՜խ, անիծված սարդեր: Հա՛յ թե ծծում են. հա՜յ թե ժողովրդին իրենց ցանցի մեջն են գցել հա՞:

ՍԵԹՈ.—Հապա՞-հենց եդպես ե: Սպասիր, տեսեդ մի ինչ վոր թուղթ են կպցրել: (Մոտենում և բարձրաձայն կարդում ե): «Տեղեկացնում եմ բոլոր անդամներին, վոր այսոր, ճաշից հետո՝ ժողով ե նշանակվում՝ խանութը կապալով տալու համար»: Ըհը՜, տեսա՞ր, թե ես լվանները վոնց են աշխատում: Ուշքի գալու ժամանակ ել չեն տալիս:



ՊԵՏԻԿ.—Հիմի ի՞նչ անենք...

ՍԵԹՈ.—Ա՛յ, թե ինչ. ամենից առաջ՝ յես ու դու պետք ե գյուղում պտտենք ու գյուղացիներին զգուշացնենք: Կանանց համոզելը հեշ բան ե. բայց տղամարդիկ մի քիչ ավելի դժվար կը համոզվեն: Հետո՝ վոր նույնպես կարևոր ե, եսոր բոլորն ել պետք ե ժողովին ներկա լինեն: Յես արդեն վաղուց միջոցներ ձեռք եմ առել: Եսոր հետևանքներին պետք ե սպասենք: Հասկացա՞ր:

ՊԵՏԻԿ.—(գլխով դրական նշան ե անում) Լա՜վ:

ՍԵԹՈ.—Մի ժամից հետո կը հավաքվենք եստեղ ու կը պայմանավորվենք:

ՊԵՏԻԿ.—Դե, գնանք, թե չե՞ հրե՜ն, ժողովուրդն արդեն խանութ ե գալի...

(Յերկուսն ել հեռանում են. բեմից դուրս գալու ժամանակ դիպչում են բեմ մտնող մի կնոջ):

## ՏԵՍԱՐԱՆ 4.

ՄԱՐԻԱՄ.—(ներս մտնելով) Ա՜յ, գրողը տանի ձեզ... ենպես են վազում, վոր... քիչ մնաց՝ կողքս պիտի ջարդեյին...

ՆԱՐԳԻԶ.—(ներս մտնելով). Ի՞նչ ա. խանութը դեռ փակ ա՞:

ՄԱՐԻԱՄ.—Հըլբըթ վաղ ե: Կենանք՝ տեսնենք քեֆները յերբ կը թամամի: (Յերկուսն ել նստում են խանութի մոտ ընկած գերանների վրա):

ՆԱՐԳԻԶ.—Ե՜հ, կրակն ընկանք մենք ես խանութի ձեռքից: Եկեցս հետ պարտքի մեջ խրվել եմ, համա առած ապրանքս հեչ չի յերևում:

ՄԱՐԻԱՄ.—Բա ընչի՞ յես պարտքով առնում: Կանխիկ տու, թե չե Արամն ենպեսն ա, վոր կաշիդ կը մաշկի: Ապառիկ առնելիս են տեսակ ապրանք կտա, վոր կանխիկ առնելու ժամանակ վրեն ել չեյիր մտիկ տա:

ՆԱՐԳԻԶ.—Կ՛անխիկ: Ասելը հեշտ ա: Համա, վոր ամեն սհաթի էլ փող չի ըլո՞ւմ:

## ՏԵՍԱՐԱՆ 5.

Մտնում է ՄԱԹԵՎՈՍԸ, ապա խոսակցության ժամանակ գալիս են նաև ուրիշ գյուղացիներ և գեղջկուհիներ:

ՄԱՐԳԱՐ.—Բարև՛... Արամին ղոնաղ եք յեկե՞լ:

ՄԱՐԻԱՄ.—(Առանց նրա վրա ուշադրություն դարձնելու՝ շարունակում է իր խոսակցությունը): Ավելի լավ է դուրսը պարտք անես ու եստեղից պարտքով ապրանք չառնես:

ՆԱՐԳԻԶ.—(շուրջը նայելով): Արամն ո՞ւր կորավ է՛: Եսչափ էլ սպասել կը լինի՞: (Բարկացկոտ):

ՄԱՐԳԱՐ.—Ջուր տեղը ո՞ւր ես տաքանում. վոր տաքացար՝ ենա ես սհաթիս Արամը կը վազի դուռը բաց կանի: Մի ժամ ա, ինչ հրեն բաղումը նստած ա:

ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչ ա—կաչաղակ բռնելու ա գնացե՞լ:

ՆԱՐԳԻԶ.—Մինչև մութ հո ըստեղ չենք նստելու:

ՄԱՐԳԱՐ.—Խեղճ տղի փորը ցավեց՝ վազեց բաղը: Ամեն որ ես ժամին փորը ցավում ա...

ՄԱՐԻԱՄ.—Տեսնում եմ, վոր ախմախ մարդ ես, Մարգար, հենց մենակ տոտամ կրճատացնել գիտես:

ՄԱՐԳԱՐ.—Ո՛հո՛հո՛հո՛...դե վոր քեֆդ չի գալիս դու էլ մի լսի:

1-ԻՆ ԳՅՈՒՂԱՑԻ.—Լա՛վ, Մարգար, ձե՛ռք քաշի, թե չէ խայտառակ կանի...Սա են նամուսի տերն ա, վոր...

ՄԱՐԻԱՄ.—Լավ էլ կանեմ: Յերբ վոր պետք ա՝ խայտառակ կանեմ—բա ինչի՞ պտեմ սուս անի...ինչքան մենք սուս անենք՝ էնքան դուք մեր վզին կը նստեք:



## ՏԵՍԱՐԱՆ 6.

Մտնում է ՍԵԹՈՆ

ՄԱՐԳԱՐ.—Ծալդ պակաս ա, Մարիամ:

ՄԱՐԻԱՄ.—Հալբա՛թ: Սաղ գեղումը մենակ դու յես խելոքը. մնացածների ծալը պակաս ա:

ՄԱՐԳԱՐ.—Դու չատ ես լեզվիդ անում: Մարդուդ էլ ի՞նչ ասեմ, վոր քեզ նմանին տուն ա թողնում:

ՄԱՐԻԱՄ.—Հողեմ գլուխդ. քեզնից հո չպիտի իրավունք հարցնի: Են ա՝ դու վոր խելոք ես, դրա համար առաջի կնկանդ գլուխը չկերար:

ՄԱՐԳԱՐ.—Եդ քու գործը չի...կնիկը պիտի լեզուն կարճ պահի, մարդու խոսքիցը դուրս չգա ու ամեն բանի մեջ կտրած դդալի նման մեջ ընկնի:

ՍԵԹՈ.—Դե՛, Մարգար ախպեր, եդ մեկն արդեն չատ ես սխալվում:

ՄԱՐԳԱՐ.—Դո՞ւ վորտեղից դուրս պրծար: Կնկա փեշի տակը մտի՛ր: Դո՛ւ էլի պակաս:

ՍԵԹՈ.—Կինը տան մեջ ընտանիքի առաջին մարդը պետք է լինի, վորովհետև նա, ինչպես ասած՝ տան կամենդանտի նման մի բան է...

ՄԱՐԳԱՐ.—Հա, պղինձների կամենդանտ ա:

ՄԱՐԻԱՄ.—Ձենդ կտրիր, կեղտոտ վոջիլ:

ՄԱՐԳԱՐ.—Մարիամ, մի հաջա, թե չէ՝ քիթ ու մըռութդ կը ջարդեմ—մարթդ չնորհակալություն կը հայտնի:

ՄԱՐԻԱՄ.—(Ծիծաղում է): Վախենում եմ, վոր մեջքդ կը ցավի նրա չնորհակալությունը ձեր տուն տանելուց:

ՅԵԹՈ.—Հա՛, բա՞ս: Բանի վոր կամենդանտ ես, ամեն մի գործի մեջ էլ պիտի խառնվես. թե չէ՝ վերցնենք հենց մեր կոոպերատիվը. քա՞նի կին կա կոոպերատիվում: Ա՛յ, պատճառն էլ հենց եդ ա, վոր կոոպերատիվում կարգ ու կանոն չկա:

ՄԱՐԳԱՐ.—*Չի՞ լինի, որ ինքդ գործի անցնես ու կարգ հաստատես:*

ՍԵԹՈ.—*Ինչի՞ չէ, յեթե պետք յեղավ՝ կանցնենք էլ, ու քեզ էլ չենք հարցնի:*

(Բեմի հետևը լսվում է սազի նվագ):

ՆԱՐԳԻԶ.—*Ո՞ւր կորավ էդ Արամն է՛:* (Բղավում է) *Արա՛ա՛մ...*

ՄԻ ՁԱՅՆ.—*Հե՛յ...*

ՆԱՐԳԻԶ.—*Շուտ արի է՛, այ Թամբրա՛լ, եսքան մարդիկ քե՛զ են սպասո՛ւմ:*

ՄԻ ՁԱՅՆ.—*Յերկա՛ա՛... Յեկա՛...*

## ՏԵՍԱՐԱՆ 7.

Մտնում է Պետիկը՝ սազը ձեռքին, նվագում է:
Գյուղացիները զրույց են անում:

ՊԵՏԻԿ.— *Ձե՛ն տուր, սազ իմ, ձե՛ն տուր սազ իմ,*
*Խաղա՛ ու հնչի—*
*Մեր կոոպերատիվ խանութը*
*Բանի պետքը չի:*

ՄԱՐԻԱՄ.—*Սազ ու Պետիկ, սաղ ո՛լ:*

ՍԵԹՈ.—*Կեցցե՛ Պետիկը, կեցցե... Ե՛ղպես...*

ՊԵՏԻԿ.—*Գուլակը մեզ չարչարում է—*
*Չի թողնում շնչենք.*
*Լավ դաս կը տա գյուղխորհուրդը*
*Կուլակի պնչին:*

ՄԱՐԳԱՐ.—*Ի՞նչ ա, Պետիկ, չլնի՞ կոմունիստ ես դառել:*

ՊԵՏԻԿ.—*Ասե՛նք թե եղպես ա՝ քեզ ի՞նչ: Դու քու բանն իմացիր ու ուրիշների գործերին մի խառնվիր:*

ՍԵԹՈ.—*Յերգի՛ր, յերգի՛ր, Պետիկ, ամեն ախմախ խոսքի ականջ մ՛ի անի:*

ՊԵՏԻԿ.— *Մեր նախագահ Սմբո աղան*
*Խորամա՛նկ է շատ—*



*Շահասեր է Սմբո աղան*
*Ու շատ աչքածակ:*

ՄԱՐԳԱՐ.—*Դե՛, բարեկամ, եղաեղ արդեն մի քիչ կամաց քշիր սելերդ. դրա համար նա քեզ մի ընե՛ց ծեծ կը տա, որ տանդ ճամբեն կը կորցնես:*

ՊԵՏԻԿ.—*Ես էլ տեսե՞լ ես:* (Ցույց է տալիս նրան իր հսկայական բռունցքը):
*Եստեղ դզլի, ենտեղ դրփի— —*
*Աչքի թող փչի.*
*Թե փայերը պակասեցին...*
*Իրեն մեղքը չի...*

## ՏԵՍԱՐԱՆ 8.

Մտնում է Արամը՝ մի հաղթանդամ գյուղացի:
Հարբած է. կանայք հարձակվում են նրա վրա:

ԿԱՆԱՅՔ.—*Գժվե՞լ ես, խելքդ կորցրե՞լ ես՝ ի՞նչ է:*

ՄԱՐԻԱՄ.—*Այ ավանակ, քեզ շատ պետի սպասե՞նք: Բաց արա խանութը, շո՛ւտ:*

ԱՐԱՄ.—*Կը հասնես, գործդ չի մնացել: Տեսե՛ք ի՞նչ ա յեղել, որ աղջիկպարոնը մի քիչ սպասել ա:* (Ցանկանում է գրկել Մարիամին): *Ա՛խ, ինչ կակուղն ես, Մարիամ:*

ՄԱՐԻԱՄ.—*Ձեռքդ քեզ քաշիր, անամոթ, թե չէ՝ ես ա ավլի՝ գլուխդ ճղեցի.* (դուրս է թռչում գրկից):

ԱՐԱՄ.—(Բռնությամբ գրկում է նրան): *Հապա, փորձի մի տեսնեմ, թե...*

ՄԱՐԻԱՄ.—(Դուրս ցատկելով) *Ա՛ռ:* (Ապտակում է):

ԱՐԱՄ.—(Յերեսը բռնելով). *Ախ, դու անիծած քյավթառ:* (Մի քայլ հետ է գնում: Պետիկը սալմա յե տալիս և Արամը մեջքի վրա փովում է: վեր յելնելով): *Ես վո՞ր շան տղեն ա ըստեղ փետեր վեր ածել:*

Գյուղացիներն ու գեղջկուհիները ծիծաղում են՝ դիտելով այս տեսարանը:

ՊԵՏԻԿ.—*Խանութի դեմ ժողովուրդ—*

ԽՈՒՄԲ.—Ջան, գյուլում, ջա՛ն, ջա՛ն...
Սպասում է Արամին
ԽՈՒՄԲ.—Ջա՛ն, խա՛նում, ջա՛ն, ջա՛ն...
Խանութը փակել, հեռացել—
ԽՈՒՄԲ.—Ջա՛ն, Արա՛մ, ջա՛ն, ջա՛ն...
Արամն իր գործին է գնացել—
ՄԱՐԳԱՐ.—Հա՛, հա՛, հա՛,... Հը՞, Արամ, կերա՞ր:
ԽՈՒՄԲ.—Ջան՛, խա՛նում, ջա՛ն, ջա՛ն...
Ինչքան ուզեք պուդրա կա—
ԽՈՒՄԲ.—Ջա՛ն, Արա՛մ, ջա՛ն, ջա՛ն...
Դուխի, սապոն ու արաղ—
ԽՈՒՄԲ.—Ջա՛ն, խա՛նում, ջա՛ն, ջա՛ն...
Ինչ որ անպետք ա՝ շատ կա—
ԽՈՒՄԲ.—Ջա՛ն, գյուլում, ջա՛ն, ջա՛ն...
Պետքական բան հ՛եչ չկա—
ԽՈՒՄԲ.—Ջա՛ն, խա՛նում, ջա՛ն, ջա՛ն...

ՄԱՐԻԱՄ.—(Արամին). Այ հայվան, խանութը շուտ ես բացո՞ւմ, թե չէ:

ԱՐԱՄ.—(Խանութը բացելով): Եդ քու գործը չի...

ՍԵԹՈ.—Ո՞նց թե մեր գործը չի: Դու ո՞ւմ ես ծառայում. մեզ ես ծառայելո՞ւ, թե չէ... Մենք անդամներ ենք, իսկ դու մեր գործակատարն ես: Դու պետք է քու գործը լավ կատարես:

ԱՐԱՄ.—(Դառնալով): Ձեր գործը չի—եսպես ամեն տեսակ պրոպագանդ մի՛ք անի: Իմ խազեյինը Սմբատ ապերն ա: Դուք իմ վոտնե՛րիցն եք կախված: Ա՛յ, ուզեմ՝ բաց կանեմ, ուզեմ՝ տուն կը գնամ:

ՍԵԹՈ.—Ա՛յ՝ տեսնո՞ւմ եք, տեսնո՞ւմ եք, թե ո՞վ է մեղավոր: Մեղավորը մենք ենք: Ես տեսակ ավազակին իշի պոչից պիտի կապել ու քաշ տալ, համա մենք սրան կոոպերատիվ ենք տվել ու մեր գլխին տեր ենք դարձրել:

ԱՐԱՄ.—Անդա՞մ: Դու է՛լ անդամ ես՝ իշու քուռակ:



ՄԱՐԳԱՐ.—Արա՛մ, ի՞նչ ես մտիկ տալի—տուր քիթ ու մռութը ջարդի՛, որ էլ ուրիշ անգամ դահլա չը տանի:

ԳԵՏԻԿ.—Մեղք ա, մեղք—չխփես, վայ թե տուն չհասցնենք:

ԱՐԱՄ.—Չեմ ուզում սրանց հետ գլուխ դնեմ, թե չէ՝ էնպես կը խփեյի, որ...
Խանութը բացում է: Բոլորը միասին ներս են մըտնում):

## ՏԵՍԱՐԱՆ 9.

Երբ որ բոլորը մտնում են խանութ, որորվելով բեմ է յելնում Սմբատը: Նրան՝ թևից բռնած. բերում է իր տղան, Սուրիկը: Սմբատի մյուս կողքից քայլում է Մաթևոսը, որի գրպանից դուրս է ցըցվել ողու շիշը:

ՍՄԲԱՏ.—Ցես միշտ էլ ասել եմ, խմի՛ր, համա խելքդ տանուլ մի տա... Էնպես չի՞ ջանիկս (տղային):

ՍՈՒՐԻԿ.—(Լուռ է և քաշում է նրան դեպի տուն):

ՍՄԲԱՏ.—Դր-դր-դո՛ւ ի՞նչ ես սսո՛ւս արել, ջան որդի, քեզ հետ խոսողը—ի՛ր—հերդ չի՞:

ՄԱԹԵՎՈՍ.—Թող, Սմբատ: Գնանք տո՛ւն, գնա՛նք:

ՍՄԲ.—Չէ՛: Դո՛ւ ինձ, չ... չ... չա՛ն որդի, տասսա՛, ի՞նչի համար եմ յես քեզ,—ի՛ր—ինչի յեմ ուսսսում տալի:

ՍՈՒՐԵՆ.—Ա՛յ հեր, գնանք:

## ՏԵՍԱՐԱՆ 10

Մի քանի գյուղացիներ խանութ են գալիս: Նայում են:

1-ԻՆ ԳՅՈՒՂ.—Տես է՛, մեր նախագահը հարբած ժողովից ա գալի:

2-ՐԴ ԳՅՈՒՂ.—(Ծիծաղում է): Չէ՛, յերևի թաղա բան

*ա առել՝ մաղարիչ ա անում։ Ջե՞ս տեսնում, վոր բարեկամն էլ հետն ա։*

(Յերկուսն էլ մտնում են խանութ։ Խանութից դուրս են գալիս Սեթոն ու նրա հետևից էլ Մարգարը։ Յերկուսն էլ կանգնում ու նայում են)։

## ՏԵՍԱՐԱՆ 11

**ՄԱԹԵՎՈՍ**.—(Սմբատին քաշում է)։ *Թո՛ղ Սմբատ, լավ չի՛։ Մարդիկ մոտիկ են տալիս։*

**ՍՄԲԱՏ**.—*Հերն է՛լ անիծած, թե մոտիկ են տալիս։ Ուրիշի փողով հո չեմ խմել... Իմ փողով եմ խմել...*

**ՄԱԹԵՎՈՍ**.—*Դե, հմի գնա ու հաստատի, թե...*

**ՍՄԲԱՏ**.—*Այ, ուզեմ, էլի՛ կը խմեմ...* (Ձեռքը մեկնում է դեպի Մաթևոսի գրպանի շիշը)։ *Տո՛ւր։*

**ՄԱԹԵՎՈՍ**.—*Գնանք տո՛ւն։ Դեռ էլի գործ կա։* (Քաշում է նրան դեպի ցանկապատի դուռը և յերեքն էլ հեռանում են)։

## ՏԵՍԱՐԱՆ 12.

**ՍԵԹՈ**.—*Ա՛յ քեզ նախագա՛հ։ Ա՛յ, քեզ կոոպերատի՛վ։ Բավական է, մի քիչ փորես՝ գործերը իրանք իրանց կը բացվեն։*

**ՄԱՐԳԱՐ**.—*Փորի՛ր, փորի՛ր, չան վորդի, քանի դեռ քեզ համար գերեզման չեն փորել։*

**ՍԵԹՈ**.—(Դառնալով). *Մի վախեցնի՛... Վախեցողը չեմ... Ձեզ նման շատերին ենք ճանապարհ ձգել՝ քեզ նման վոջլից հո չեմ վախենալու...Հը՛, սրիկա... դեռ խոսում էլ է։*

**ՄԱՐԳԱՐ**.—(Բռունցքը բարձրացնում է, վոր խփի, բայց Սեթոն խույս է տալիս։ Հետեվից՝ Մարգարի ձեռքը բռնում է Պետիկը).

## ՏԵՍԱՐԱՆ 13

**ՊԵՏԻԿ**.—*Հա՛յ, անամո՛թ։* (Մարգարի գլխի վերևը բռնած պահում է նրա ձեռքը և բեմ է դուրս գալիս՝



իր ձեռքից ազատվել ձգտող Մարգարի հետ միասին)։ *Մի տուքդ պահի՛. թե վոր նրա գլխից մի մազ թափել ա՝ ինձ հետ ես գործ ունենալու։ Հասկացա՞ր։*

**ՄԱՐԳԱՐ**.—Ատամները կրճտացնելով՝ սպառնում է յերկուսին էլ)։ *Սպասեք, անիծվածներ, յես ձեր հախից կը գամ։*

(Խանութից աղմուկ է լսվում։ Հետզհետե ուժեղանում է։ Մեկը մյուսի հետևից դուրս են վազում գյուղացիները ու գեղջկուհիները և բարկացած գոռում են։ Բեմը լցվում է մարդկանցով։ Լսվում են բացականչություններ։ *«Ախ, թալանչիներ...» «Ա՞խ, անիծվածներ...» «հեչ խիղճ չունեն», «էլ յետ գներն ավելացրել են», «մարդու վերջին չարիքն էլ հանում են...» «չարչուց էլ վատ են թալանում...»*

1-Ն **ԳՅՈՒՂԱՑԻ**.—*Ապրանքն էլ ա բանի նման ըլեր՝ սաղ փտած ա։*

2-Դ **ԳՅՈՒՂ**.—*Վոչ մանգաղ կա, վոչ թիակ կա—հենց մենակ պուդրա ու դուխի յեն բերել։*

1-Ն **ԳՅՈՒՂ**.—*Կորչե՛ն թող—ինչների՞ս է էդ տեսակ կոոպերատիվը։*

2-Դ **ԳՅՈՒՂ**.—*Կոոպերատիվ չե՛նք ուզում։*

1-Ն **ԳՅՈՒՂ**.—*Փայերը հե՛տ տվեք։*

2-Դ **ԳՅՈՒՂ**.—(մոտենալով ցանկապատի դռանը) *Ե՛յ, Սմբաթ աղա, նախագահ ես, ի՞նչ ես—մեր փողերը հե՛տ տուր—կոոպերատիվդ մեզ պետք չի...* (աղմուկն աճում և ուժեղանում է։ Կանայք ճչում են)։ *«Մեր փողն առնում՝ մեզ մարդատեղ չեն դնում»... «Մեր արյուն-քրտինքով էլ չենք կարում բան առնենք». «Հերի՛ք է մեր արյունը խմեք»...* (Պետիկն ու Սեթոն մի կողմ կանգնած՝ նայում են)։

## ՏԵՍԱՐԱՆ 14

**ՍՄԲԱՏ**.—(Ցանկապատի դռնից դուրս գալով)։ *Ի՞նչ եք աղմկում։ Ի՞նչ եք գոռում։*

1-Ն **ԳՅՈՒՂ**.—*Փայերը հետ տու...*

2-Դ ԳՅՈՒՂ.—*Էս տեսակ խանութը մեզ պետք չի՛…*

1-Ն ԳՅՈՒՂ.—(վազում է դեպի խանութը) *Մեր փայերը հե՛տ տվեք…* (նրա հետևից վազում է ամբոխը Պետիկն ու Սեթոն կանգնում են ամբոխի և խանութի միջև և արգելում են վազքը):

1-Ն ԳՅՈՒՂ.—*Թո՛ղ, քե՛զ ասում եմ…*

ՍԵԹՈ.—*Կանգնեցե՛ք, ընկերներ…*

1-Ն ԳՅՈՒՂ.—*Ի՞նչ իրավունքով ես մեր ճամբեն կտրում…*

ՄԱՐԳԱՐ.—*Խփե՛ք դրան, խփե՛ք…*

ՍԵԹՈ.—*Ընկերներ, եսօր ընդհանուր ժողով է նշանակված՝ մեկ է, խնդիրը կը լուծենք:*

1-Ն ԳՅՈՒՂ.—*Քո հերն էլ անիծած, քո ժողովինն էլ—յես իմ փայն եմ ուզում:*

ՍԵԹՈ.—*Ա՛յ մարդ, թալանչի հո չե՞նք մենք. էդ մենակ վարչությանն ա ձեռնտու: Նրանք խանութը թալանել են՝ մեղքը մեզ վրա կը գցեն:*

ՄԱՐԳԱՐ.—*Տվե՛ք էդ շան տղին, ի՞նչ եք ականջ անում…տվե՛ք:*

ՊԵՏԻԿ.—(վազում է դեպի Մարգարը. ամբոխն ակամա հետ է քաշվում և հայացքները սառում է նրանց վրա: Պետիկը բռնում է Մարգարի կրծքից): *Ո՞ւմ խփեն: Հը՞: Հապա՛ մի փորձիր: Ո՞ւմ պիտի խփես, ով անձրևի որթ: Հո՛գիդ կը հանեմ…* (ամբոխը վազում բաժանում է նրանց: Ապա հետզհետե հանգստանում են: Լսվում են բացականչություններ): *Թող կորչի՛, Պետի՛կ, թող…*

ՍԵԹՈ.—(Սմբատին) *Նախագահ դո՞ւ յես, ժողովը բա՛ց:* (բղավում է դեպի խանութը): *Սեղանը բեր, Արամ. խլացել ես՝ ինչ է—սեղանը բեր:*

## ՏԵՍԱՐԱՆ 15

ԱՐԱՄ.—(Սեղանը դուրս է բերում և դնում է ցանկապատի մոտ): *Ճամբա՛ տվեք: Ի՞նչ եք խմբվել առաջս:*

ՍԵԹՈ.—*Նախագահ, ժողովը բա՛ց արա: Եղպես պիտի*



*անենք, վոր ամեն ինչ կարգին լինի: Թե չե՝ էնպես ենք գործ անում՝ վոնց վոր մութ ելեմենտ ըլենք: Հենց մի բան եղավ՝ բռունցք ենք քաշում:*

ՁԱՅՆԵՐ.—*Էդ հո մենք չեյինք…էդ սաղ Մարգարի գործերն են: Ամենից շատ նրան պիտի ասես… :*

ՄԱՐԳԱՐ.—*Ի՞նչ ես քու կարգ ու կանոնով մեջ խառնվում: Ո՛հո, տեսեք, էլ քեզ եսաեզ ճանաչող չկա էլի՛, վոր փասոն ես բանացնում: Ըստեղ քեզ համար քու կարմիր բանակը չի: Կողքերդ շուտ կը դըզենք:*

ՍՄԲԱՏ.—*Պարոն-ընկեր անդամներ: Հայտարարում եմ ժողովը…խնդրում եմ քվեարկել…ո՞վ դեմ է, ո՞վ կողմնակից է…*

ՁԱՅՆԵՐ.—*Ո՞վ կողմնակից. ինչի՞ն կողմնակից:*

ՍԵԹՈ.—*Ձեռներդ բարձրացրե՛ք…*

1-Ն ԳՅՈՒՂ.—*Ի՞նչի համար բարձրացնենք. դու մի բացատրի տեսնենք:*

ՍԵԹՈ.—*Նախագահ պիտի ընտրենք: Էսպես չի՛ կարելի:*

ՁԱՅՆԵՐ.—*Սմբա՛տին, Մարգա՛րին, Մաթթեո՛սին:*

ՄԱԹԵՎՈՍ.—*Յես չեմ ուզում… թող Մարգարը լինի:*

ՁԱՅՆԵՐ.—*Մարգարին, Մարգարին, Մարգարին:*

ՄԱՐԳԱՐ.—*(Սեթոյին) Համա դու հենց քոնն ես քշում… Հըմի հո տե՞սար: Դե ձենդ կտրի՝ քանի չունչդ վրադ ա* (գրավում է նախագահի տեղը) *պարոն-ընկեր-անդամներ, ես մեր խանութում վոր կարգ չլի՝ գործը գլուխ չի գա—քանի վոր կոոպերատիվն ուզում է մեր տունը բոլորովին քանդի…:*

ՍԵԹՈ.—*Վարչության անդամն էլ դո՛ւ ես՝ յեթե կարգ չկա՝ դո՛ւ ես մեղավոր:*

ՁԱՅՆԵՐ.—*Ճի՛շտ ա. ճի՛շտ ա: Եղպե՛ս, Սեթո…*

ՄԱՐԳԱՐ.—*Հենց դրա համար էլ յես խոսում եմ: Մեր գործը գեղացու գործ ա: Կոոպերատիվ բանաց-*

Ս.Ս.Խ.Հ. ... С.С.Р.А Публичная Библиотека 7/XI-1922 имени А. Мясникяна ... ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

նելը մեր ձեռքից չի գա: Եդ մեր գործը չի, ա-ռևտրականի գործ ա:

ՉԱՅՆԵՐ.—Ճի՛շտ ա. ճի՛շտ ա:

ՄԱՐԳԱՐ.—Ցես ես տեսակ առաջարկ եմ անում, վոր եդ խանութը, ասենք, ըսենց (յեղունգով սեղանի վրա նշան ե անում)... փակենք, թե չե ու՝ թե մի բարի մարդ կը գտնվի՝ կապալով տանք: Մեկա՝ ես գործից մենք փող մի օգուտ չենք անում ու հեչ բանի պետքական գործ էլ չի:

ՄԱԹԵՎՈՍ.—Ցես էլ եմ Սմբատին ասել: Ասում եմ ըն-չի՞ համար ա եդ դուքանը: Մեկա, ասում եմ, դուք առուտուր անողը չեք: Տվեք, ասում եմ, ցես արեն-դով վեր կալնեմ: Նա, նշանակում ա, այսինք. մուֆթա չեմ ուզում, այսինք, ասում եմ, գեհ, մի բան էլ կտամ: Ասում եմ, հենց թող վիվիսկեն էլ ձերն ըլի, ձեր անունն ըլի—եդ գիֆ ինձ համար միավոր ա: Մենակ թե, նշանակում ա, այսինքն թե՝ ասում եմ, եդ գործը իմ ձեռից կը գա...գե, հմի ձեզ համար էլ լավ կը լինի...Ասենք, գե շատ էլ չեմ կարող տամ, համա մի ցերկու վեդրա խը-միչքը ձեզ փեշքաշ ա:

ՉԱՅՆԵՐ.—Ա՛յ շատ ապրես Մաթեվոս: Ա՛յ ջանդ սաղ ըլի: Համա թե գեղը ձեռդ կաննես հա՛...

ՊԵՏԻԿ.—Ի՛նչ բարեգործն ա յե՛... հա՛, հա հա հա:

1-ն ԳՅՈՒՂ.—Լա՛վ արյուն ծծողներ են...ուխայ:

ՄԱՐԻԱՄ.—Մեր աչքը լիս...

1-ն ԳՅՈՒՂ.—Ցերկու վեդրան քիչ ե՝ յերեքը տուր...

2-դ ԳՅՈՒՂ.—Հոտ քաշենք՝ հերիք ե էլի...

ՄԱՐԻԱՄ.—Բա փայե՞րը ումից առնենք:

ՆԱՐԳԻԶ.—Հոր հոգու ենք ավե՞լ:

ՍԵԹՈ.—Ընկեր անդամներ, մենք եդ գործին համա-ձայն չենք: Դա բուրժուաների շահագործությունն ե: Նրանք ուզում են մեր կոոպերատիվը քան-



դեն: Չհամաձայնեք. Խանութը մերն ե. Փողը մե՛նք ենք ավել: Նա ինչի՞ պիտի մեր աշխատած քրտինքով հարստանա: Մենք մեր խանութը մեզ համար կպահենք: Մենք չենք թողնի, վոր վաշխինները մեր արյունը ծծեն: Խանութը չե՛նք տա, բայց խա-նութում աշխատելու համար պիտի ընտրենք խե-լոքն մարդկանց—են տեսակ մարդկանց, վոր հասարակության գործի համար նվիրվածություն ունենան: Ես տեսակ կուլակներին մեր կոոպերա-տիվի մեջ պիտի չթողնենք: Սրանք մեզ օգուտ տալու տեղ՝ ծախում են մեզ... ընկեր անդամներ, եսոր հենց իմ ականջովս եմ լսել, թե վոնց ես բուրժույ Մաթեվոսը Սմբատին համոզում եր, վոր խանութը կապալով տա, վոր ասենք նշանակում ա, Սմբատին եդ գործը սարքելու համար ամսական յերկու տա-սանոց կը տա... բա մեր փայերն ուր են: Մեր փա-յերն ի՞նչ են արել:

ՄԱԹԵՎՈՍ.—Եդ բոլորը սո՛ւտ ա: Չհավա՛տաք: Սո՛ւտ ա ասում:

ՍՄԲԱՏ.—(Սեթոյի վրա հարձակվելով): Դու իմ գո-ղությունը յե՞րբ ես տեսել, վոր ինձ գող ես ասում: Բռնել ե՞ս: Կհաստատե՞ս: (բռնում ե նրա կրծքից ու թափահարում):

ՉԱՅՆԵՐ.—Թող, Սմբա՛տ: Ձեռք մի՛ տա: Թող խոսի: Շարունակիր: Սեթո շարունակիր: Սմբատ թո՛ղ:

ՍԵԹՈ.—Ընկերներ, յեթե ցես սուտ եմ ասում, թող ինձ վրա դանգատ տա դատարանին—ցես կը հաս-տատեմ: Իսկ զոռով ցես սուս չեմ անի:

ՍՄԲԱՏ.—(շարունակում ե թափահարել նրան): Ա՛խ, դու թալանչի մարդասպան... դո՛ւ ինձ ավազակ դուս բերե՞ս: (Ձեռքը բարձրացնում ե վոր խփի):

ՄԱՐԳԱՐ.—Տո՛ւր, Սմբաթ, տո՛ւր եդ շան տղին, վոր

մեր գեղի գործերը չխառնշտի... քիթ ու մռութը ջարդի:

**ՊԵՏԻԿ.**—Ջե՛նզ, անամոթ: Քո հացով ա մեծացե՞լ: (Հարձակվում է Սմբատի վրա, բռնում է նրա ձեռքից, քաշում է, գցում է գետին և Սեթոյի ու Սըմբատի միջև կանգնելով, բռունցքն ուղղում է Սըմբատին): Հոտ արա մի տես... հ՞ը, վո՞նց ա: Ուզում ե՞ս՝ փորձես:

(Բեմի հետևից լսվում են ձայներ. կանգ է առնում կառք և լսվում է կառապանի կանչը: Բոլորը հետ են նայում: Ներս է մտնում Հայկոոպի հրահանգիչը: Նրա հետ միասին քննիչը):

## ՏԵՍԱՐԱՆ 16.

**ՀՐԱՀԱՆԳ.**—Կոոպերատիվն այստե՞ղ է: (Նայում է շուրջը՝ տեսնում է գետնին ընկած Սմբատին, որը վեր է կենում և յերեսը սրբում ու մարտական դիրքով կանգնած նայում Պետիկին): Ձեզ մոտ, յերևում է, պատերազմ է յեղել:

**ՄԱՐԳԱՐ.**—Չե՛, ժողով ունենք: Դե՛, նրանք իրար հետ կռվեցին ելի: Իսկը դուք ո՞վ եք:

**ՀՐԱՀ.**—Յես քաղաքից, Հայկոոպից եմ յեկել: Ձեր խանութը պիտի քննեմ:

**ՄԱՐԳԱՐ.**—Եդ ձեր ընկերն էլ եդ գործով ե՞:

**ՀՐԱՀ.**—Եդ դուք հետո կիմանաք:

**ՄԱՐԳԱՐ.**—(Չլսել ձևացնելով): Ինչպե՞ս...

**ՀՐԱՀ.**—Քննության ենք յեկել... Պիտի ստուգենք, թե ձեր կոոպերատիվի գործերն ի՞նչպես են: Լավ եք աշխատո՞ւմ, թե չե... Կոոպերատիվում հո կուլակներ չկան:

**ՄԱՐԳԱՐ ՅԵՎ ՍՄԲԱՏ.**—(Միասին) Դե, ի հարկե, եդ դուք ինքներդ էլ կը տեսնաք... Մենք եստեղ բոլորս էլ խեղճ մարդիկ ենք... Ի՞նչ պտի ստուգություն անեք, որ...



**ՀՐԱՀ.**—Լավ է, որ հենց ժողովին հասանք: Հենց այստեղ էլ կը խոսենք: Օրակարգում ի՞նչ հարցեր ունեք:

**ՄԱՐԳԱՐ.**—(Քսվելով) Ահա, խնդրեմ դուք ինքներդ մտիկ արեք: (Տալիս է օրակարգը):

**ՀՐԱՀԱՆԳ.**—(Ինքն իրեն)... Խանութի կապալը... (Մտածում է): Ի՞նչ է, մինչև հիմի դեռ խանութ չունե՞ք:

**ՍՄԲԱՏ.**—(Կմկմում է): Դե, չ—չե՛... Խանութ ունենք... (Կամացուկ անցնում է ամբոխի մեջ և անհետանում է):

## ՏԵՍԱՐԱՆ 17

**ՀՐԱՀ.**—Յերկրո՞րդն եք ուզում բացել:

**ՄԱՐԳԱՐ.**—Չե՛... Մեր խանութն ենք ուզում կապալով տալ: Հաշիվ չի... Ձեռնտու չի...

**ՀՐԱՀ.**—Ինչպե՞ս թե կապալով...

**ՄԱՐԳԱՐ.**—Հենց ե՛նպես—ի՞նչ օգուտ ունենք նրանի՛ց, վոչ մի շահ չկա...

**ՁԱՅՆԵՐ.**—Ճիշտ ա... Հենց մենակ թալան ա... Դուխի ու պուդրուց ավել բան չեն բերում...

**ՔՆՆԻՉ.**—Հանգիստ, ընկերներ, հանգիստ խոսեք, ամեն ինչ կը պարզենք: Ո՞վ է ձեր նախագահը:

**1.ԻՆ ԳՅՈՒՂ.**—Սմբատն ա:

**ՀՐԱՀ.**—Վո՞րտեղ է:

**ՍԵԹՈ.**—Հենց նոր եստեղ եր... Են եր, վոր կռվում եր...

**ՊԵՏԻԿ.**—Յերևի գնաց պակասը լրացնի: (Մատով իր վզին է խփում՝ ցույց տալու համար, թե խոսքը խմիչքի՛ն է վերաբերում):

**ՔՆՆԻՉ.**—Ոհո՛... Բա ասում եր, թե չունևոր է, խմիչքի համար փող ունի, հա՞...

**ՊԵՏԻԿ.**—Ի՞նչ աչքաշ: Հինգ կով ունի, յերեք լուծ յեզ ունի, դեռ նոքարներ էլ պահում ա:

**ՀՐԱՀ.**—*Ահա թե ինչ: Դե՛, մենք այդ հետո կը քննենք: Իսկ հիմա՝ լսեք, թե ի՞նչ եմ ասելու: Հայկոոպը տեղեկություն է ստացել, որ ձեր կոոպերատիվում մեծ չարաշահություններ են կատարվում, որ վարչության մեջ կուլակներ են նստած, որ կոոպերատիվի դրամներն իրենց կարիքների վրա յեն գործադրում: Որ ապրանքները թանկ են և գյուղին ձեռնտու չեն, և այլն: Ահա՝ Հայկոոպն էլ մեզ ուղարկել է, որ իմանանք այս ամենը ճիշտ է, թե չէ:*

(Գյուղացիները կմկմում են և խոսել չեն համարձակվում):

**ՄԱՐԻԱՄ.**—*Շատ ճիշտ ա, ընկեր: Ճի՛շտ ա: Մեր դուքանը դուքան չի՝ թալանի տեղ ա: Հարուստները դուքանն իրենց ձեռքն են գցել ու ինչ ուզում՝ են էլ անում են:*

**ՄԱՐԳԱՐ.**—*Իսկը՝ այսինքը, կարելի՞ ա հարցնեք, թե էդ տեղեկությունը ո՞ւմից եք ստացել:*

**ՀՐԱՀԱՆԳ.**—*Ձի՛ կարելի:* (Գյուղացիներին): *Նու, խոսեք, ընկերներ, ճի՞շտ է, թե չէ:*

(Գյուղացիները աչքի տակով նայում են Մարգարին, Մաթևոսին ու Ամբատին: Քննիչը հայացքով հետևում է նրանց շարժումներին, ապա հրահանգչի ականջին ինչ որ բան փչփչում և հրահանգիչը գլուխը թափահարում է):

**ՀՐԱՀ.**—*Ընկերներ, Հայկոոպի անունից ժողովը հայտարարում եմ փակված: Այս մասին յեղած ամեն մի տեղեկության համար մենք շնորհակալ կը լինենք: Իսկ հիմա՝ ժողովը պետք է փակենք, որ քննություն կատարենք:*

**ՋԱՅՆԵՐ.**—*Ճի՛շտ ա: Վաղուց պետք էր եղպես անել:*

(Հետզհետե ցրվում են):



**ՔՆՆԻՉ.**—*Ո՞վ է խանութը կառավարում:*

**ԱՐԱՄ.**—*Պատրաստ եմ ծառայելու, յես եմ:*

## ՏԵՍԱՐԱՆ 18

**ՀՐԱՀ.**—(Արամին) *Գնանք:* (Բոլորն էլ գնում են):

(Մաթևոսը, Մարգարն ու Ամբատը դեռ մնում են բեմի վրա և ցանկապատի տակ քաշված՝ ինչ որ բանի մասին շշուկով խոսում են: Յերբեմն լսվում են նրանց ձայները):

**ՄԱԹԵՎՈՍ.**—*Հըլբաթ նա՛ յա: Էլ ուրիշ ո՞վ կլնի:*

**ՄԱՐԳԱՐ.**—*Չե: Ե՛ղպես ա: Սեթոն ա մատնել:*

**ԱՄԲԱՏ.**—*Սպասիր, յես նրա միտը կը բերեմ...*

(Մտնում են ցանկապատի դռնից):

## ՏԵՍԱՐԱՆ 19

Խանութի անկյունից, ցանկապատի հակառակ կողմից, դուրս են գալիս Սեթոն ու Պետիկը:

**ՊԵՏԻԿ.**—*Լսեցի՞ր:*

**ՍԵԹՈ.**—*Բան չկա: Թող խոսեն: Շատ, շատ՝ ինձ սպանեն, բայց մեր գյուղը հո էդ արյուն ծծողներից կազատվի:*

**ՊԵՏԻԿ.**—*Դրանից քու ի՞նչը կավելանա:*

**ՍԵԹՈ.**—*Գնանք, գնանք, ընկերներին մի քանի բան պիտի հայտնեմ:*

**ՊԵՏԻԿ.**—*Ե՛հ, Սեթո, Սեթո, նրանք քո գլուխը կուտեն:*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

# ՊԱՏԿԵՐ 2

Բեմը նույնն է, ինչ վոր առաջին տեսարանում: Գերանների վրա, այստեղ-այնտեղ նստած են գյուղացիներ, գեղջկուհիներ, աղջիկներ յերիտասարդներ և խոսակցում են: Խանութը փակ է: Վարագույրի բարձրանալուց առաջ լսվում է սազի անկանոն նըվագ: Վարագույրի բարձրանալու ժամանակ Պետիկը նստած է կանանց ու յերիտասարդների միջև և լարում է իր սազը:

## ՏԵՍԱՐԱՆ 1

ՄԱՐԻԱՄ.—Հը՞, դեռ շատ պիտի լարե՞ս:
ՊԵՏԻԿ.—Ի՞նչ ա, համբերությունդ հատա՞վ: Հենց վոր լարեցի՝ կը լսես է՛լի:
ՅԵՐԻՏԱՍԱԴ.—Մարիամ, մի խանգարի:
ՊԵՏԻԿ.—Եսոր հե՛չ նվագել չեմ ուզում...
ՁԱՅՆԵՐ.—Դեհ, դեհ, նվագի՛ր, նվագի՛ր, ի՛նչ ա ըլել, վոր...
1-ԻՆ ԳՅՈՒՂ.—Նվագիր, Պետիկ, նվագիր—շատ լավ ել դուս ա գալի...
ՊԵՏԻԿ.—(Ծույլ կերպով ինչ վոր բան է նվագում):
ՄԱՐԻԱՄ.—Կոոպերատիվի վրա յերգի, կոոպերատիվի՛...
ՁԱՅՆԵՐ.—Ճի՛շտ ա ասում: Ճիշտ ա: Կոոպերատիվին մի լավ հո՛ւպ տուր:
ՊԵՏԻԿ.—Լարեմ իմ սա՛զը—
Յերգեմ խանումին,
Մեջքը քոռեմ յես
Ես մեր խանութի:



ԽՈՒՄԲ.—Հեյ խանութ յայլա՝
Յայլա ջան, յայլա—
Վա՛տ խանութ յայլա,
Յայլա ջան, յայլա:
ՅԵՐԻՏԱՍԱՐԴ.—Մարիամ, եդ քու մասին ա, հա՛...
ՄԱՐԻԱՄ.—Թո՛ղ, մի՛ խանգարի:
1-ԻՆ ԳՅՈՒՂ.—Հա, դե նա մարդ ունի... Պետիկը նրա ընչի՞ն ա:
ՊԵՏԻԿ.—Ունե՛նք գիտնական
Տերտեր գրագետ—
«Սուրբ ու պատվական»
Աստծու կրակ է:
ԽՈՒՄԲ.—Հեյ տերտեր յայլա,
Յայլա ջան, յայլա—
«Սուրբ» տերտեր յայլա,
Յայլա ջան, յայլա:
ՅԵՐԻՏ.—Հայ թե ուտացրե՛ց...
ՁԱՅՆԵ.—Հա՛-հա՛-հա՛... Համա՛ թե չունն ես, Պետիկ: Սուրբ մարդու հմար ըտենց բան կասե՞ն:
ՊԵՏԻԿ.—Մեր տերտերը ամաչկոտ է,
կանանցից հեռու փախչող է.
Յար աման, աման, աման, աման, եյհե՛յ աման...
Ինչ լավ բան կա՝ նա յե տեսնում—
Ձեռքն ընկնելիս՝ ջերն է դնում.
Յար աման, աման, աման, եյհե՛յ աման:
ԽՈՒՄԲ.—Քաշվող է մեր տերտերը, } (Կրկնել)
Քաշող է մեր տերտերը:
1-ԻՆ ԳՅՈՒՂ.—Դե՛ դե՛ դե՛... Ախպեր. դրա համար քեզ դատի կը տան—մեղք ես:
ՊԵՏԻԿ.—Տ'երտերն ու Սմբատն իրար հետ,
Արաղ են խմում իրար հետ—
Յար աման, աման, աման, աման, եյհե՛յ արաղ—

Ամբարը լցնում ցորենով՝
Մեզ խաբում են լույս ցերեկով—
Յար աման, աման, աման, աման, ելհե՛յ աման։

ԽՈՒՄԲ.—Թալանը ոգուտ բան է,
Թալանը «հոգու» բան է։
Տերտերին մեղա կասեն,
Բայց ելի դժվար մարսեն։

ՅԵՐԻՏ.—Հա՛յ թե լվանում ա, հա՛... Սա՛ղ ոլ, Պետիկ ջան։

ՊԵՏԻԿ.—Մեր կոոպերատիվ խանութում
Մկներն են մեր փողը ուտում.
Յար աման, աման, աման, աման, ելհե՛յ աման։
Մեր գործի տակն ավազ ա—
Վարչության մեջ՝ գող ավազակ—
Ջան աման, աման, աման, աման, ելհե՛յ աման...

ԽՈՒՄԲ.—Բռնենք եզ ավազակին
Ու թակենք լավ, լագաթին։

ՄԱՐԻԱՄ.—այ, եզ ճի՛շտ ա, ճի՛շտ ա ասում։ Հաստած ալրանք են բերում։

ՄԱՐԻԱՄ.—Շա՛տ ճիշտ ա։

ՊԵՏԻԿ.—(Բարկացած մի կողմ է նետում սազը)։ Շա՛տ ճիշտ ա։ Ամեն ինչ էլ ճիշտ ա։ Բանը վոր խոսքին հասավ՝ ամենքդ էլ լավ եք։ Համա վոր գործը մեջտեղ ա գալի՝ էլ յետ Սիմոնին եք նախագահ ընտրում։

1-ԻՆ ԳՅՈՒՂ.—Թո՛ղ, Պետիկ, զուր տեղը արյունդ մի պղտորի։ Սմբատն ի՞նչով ա վատ։ Համ հարուստ ա, համ անունով ա... Ինձ ու քեզ նման հո չի։

ՄԱՐԻԱՄ.—Նրա հարստությունից մեր ի՞նչն ա ավելացել։

ՊԵՏԻԿ.—Հարստություն, հարստություն—են էլ ինքն ա աշխատե՞լ... Մեր մեջքի քրտինքով ա դիզել...



Մեզ թալանողն ո՞վ ա յեղել—Սմբատը չի՞ յեղե՞լ։ Մաթեոսի չալխաները բացելու փողն ո՞վ ա տվել։ Սմբատը։ (Զարութ յամբ)։ Հա՛րուստ։ Մեր փողերը տակով անելու հարուստ ա դա։

## ՏԵՍԱՐԱՆ 2

Մտնում է ՄԱՐԳԱՐԸ

ՄԱՐԳԱՐ.—Հը՞, ի՞նչ է, Պետիկ։

1-ԻՆ ԳՅՈՒՂ.—Ա՛յ, Մարգար Սհակիչ, բարև ձեզ...

ՊԵՏԻԿ.—Հը՛, դու էլ եսեզ ե՞ս։ Լա՛վ։ Նստի՛։ Հերթը քեզ էլ կը հասնի...

ՄԱՐԳԱՐ.—(Գյուղացիներին)։ Ի՞նչ ա յեղել, ես Պետիկն եսր եսպես չարացել ա։ Յերևի նեղացել ա, վոր իրան նախագահ չեն ընտրել...

ՊԵՏԻԿ.—Պաշտոնը պատիվ չի՛, պարտականություն ա։ Կընտրեն—չեմ հրաժարվի։ Չեն ընտրի—չեմ նեղանա։ Թո՛ղ նա նեղանա, վոր ձեռն իրեն գրպանը տանելու տեղ, հասարակության գրպանն ա տանում...

ՄԱՐԻԱՄ.—Հի, հի, հի... Հա՛յ թե ավեց։ Դե, կերա՞ր, Մարգար ամի...

ՄԱՐԳԱՐ.—Դու ի՞նչ ես մեջ պրծնում։

ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչ ա վոր. կոոպերատիվի տակով արած փողերումը յես փայ չեմ ունեցե՞լ։

ՆԱՐԳԻԶ.—Դու մեզ են ասա, թե մեր խանութն ինչի՞ ես որն ընկով։

ՊԵՏԻԿ.—Կաց, վոր բացատրի...

## ՏԵՍԱՐԱՆ 3.

Մտնում են հրահանգիչն ու ճննիչը։ Յանկապատի կողմից մտնեում են Սմբատն ու Մաթեոսը։ Սմբատը խիստ հարբած է։

ՀՐԱՀԱՆԳ.—Նու, ընկերներ, բոլորդ էլ հավաքվե՞լ եք:

ՊԵՏԻԿ.—Դեռ Սեթոն չի յեկել...գնացել ա:

ՄԱՐԳԱՐ.—Յոթ մարդ մեկին չեն սպասում:

ՀՐԱՀԱՆԳ.—Այդ էլ ճիշտ է, ընկերներ: Լավ է՝ բակսենք. արդեն ուշ է:

ՁԱՅՆԵՐ.—Սկսենք... սկսենք... ժամանակն է...

ՀՐԱՀԱՆԳ.—Խնդրում եմ նախագահ ընտրել...

ՁԱՅՆԵՐ.—Մարգարին, Պետիկի՛ն, Մարգարին:

ՀՐԱՀԱՆԳ.— Վարչության անդամներն ընդհանուր ժողովին նախագահելու իրավունք չունեն:

ՁԱՅՆԵՐ.—Պետիկի՛ն, Պետիկի՛ն:

ՀՐԱՀԱՆԳ.—Դեմ չե՞ք... (լռություն): Ընկեր Մարգայան, ժողովը բացեք:

ՊԵՏԻԿ.—Յես չե՛մ կարող: Չգիտեմ:

ՔՆՆԻՉ.—Վոչինչ...կը սովորես....

ՊԵՏԻԿ.—Դե, ո՞վ ա ուզում խոսել...

ՀԱՀԱՆԳ.—Ինձ ձայն տվե՛ք :

ՊԵՏԻԿ.—Ձայնը ընկեր հրահանգիչն ա ստանում:

ՀՐԱՀԱՆԳ.— Ընկերներ, Հայկոոպի հանձնարարությամբ յես և ընկերը ձեր կոոպերատիվում քննություն կատարեցինք և պարզվեց, թե ձեր կոոպերատիվն ինչու յե վատ աշխատում: Մենք քննեցինք բոլոր այն փաստաթղթերը, վոր կոոպերատիվում կային: Խանութի աշխատանքները ստուգեցինք բոլոր կողմերից և, ահա թե ինչ պարզվեց: Կոոպերատիվի ամբողջ վարչությունը կազմված է կուլակներից, վորոնք հասարակական փողերը ծառայեցրել են իրենց շահերի համար: Նրանցից մեկը, Սմբատը, կոոպերատիվի գերաններից իրեն համար նոր տուն է կառուցել...

ՍՄԲԱՏ.—Դ.-դու եդ կը հա՛ա՛ա՛ս-տատե՞ս, հը՞, կը հաստատե՞ս:



ՊԵՏԻԿ.—Նստի՛ր, Սմբատ, քեզ խոսք չի տրված:

ՀՐԱՉ.—Վարչության մի ուրիշ անդամին, Մաթեվոս Ուստոյանին փոխարինաբար բաց է թողնված 200 ռուբլի՝ թեյարան բացելու համար: Փողը մինչև հիմա չի վերադարձվել և առհասարակ վարչությունն այդպիսի բան անելու իրավունք չունի:

ՄԱԹԵՎՈՍ.—Յես ի՞նչ...յես պարտք եմ վերցրել: Փող ունենամ՝ հետ կը տամ: Ինձ ուրիշի փողը պետք չի:

ՀՐԱՉ.—Յերրորդը՝ Մարգար Թալանյանը, կոոպերատիվի անունից կապալով վերցրել է մի ջրաղաց, վերցրել է կոոպերատիվից հիսուն փութ ցորեն և դեռ չի վերադարձրել: Կոոպերատիվն իրեն բոլոր հացահատիկներն աղացել է այդ ջրաղացում և ավելի շատ վարձ է տվել, քան ուրիշները:

ՄԱՐԳԱՐ.—Ո՞վ եր նրանց ստիպում, վոր ինձ մոտ աղան—թող ուրիշ ջրաղաց տանեյին...

ՀՐԱՀԱՆԳ.—Սմբատ Տանուտերյանն ու Տեր-Ներսես Աչքածակյանն իրենց համար գնել են ցորեն և հաշիվը անց են կացրել կոոպերատիվի գրքերով: Այս ամենը հաստատված է վկաների ցուցմունքներով:

ԱՄՐԳԱՐ.—Եղպես վկաները տասը մի շահի յեն...

ՀՐԱՀԱՆԳ.—Կոոպերատիվի փայավճարները քիչ են—նրանցով շրջանառությունը մեծացնել չի կարելի... ապրանքները մեծ քանակությամբ գնված են Հայկոոպից, ապառիկ և մինչև այժմ վոչ մի կոպեկ չի վճարված... ամբողջ ապրանքն ապառիկ կերպով բաժանվել է անդամներին...խանութում 300 ռուբլու ապրանք պակասում է...շատ ապրանքներ, վոր խանութում ծախվել են, գրքերի մեջ չեն անցկացված և այդ ապրանքների գինը գնացել է վարչության անդամների գրպանը:

Կոոպերատիվը զանազան մուրհակներ է տվել և այդ մուրհակները ժամանակին չի հանգցրել, նրանց դեմ փող չեն վճարել։ Քաղաքում սպեկուլյանտներից ու մասնավոր առևտրականներից ապրանքներ են գնել կանխիկ վճարով և ավելի թանկ գներով։

ՄԱՐԳԱՐ.—Վաչ վաքի գործը չէ, թե փողանցից ենք գնել—փողանց ձեռնտու չէ՝ ենանց էլ գնել ենք. .

ՄԱՐԻԱՄ.—Եղ ձեզ համար ա ձեռնտու էլել—մեզ համար չէ։ (Պետիկը ձեռքով է անում, վոր լռի)։

ՀՐԱՀԱՆԳ.—Ընդհանուր գումարով, այժմ խանութից պակասում է 800 ռուբլի։ Յեթե բաժանենք բոլոր փայատերերի վրա՝ կը գա ամեն մեկին 18 ռուբլի։

ՁԱՅՆԵՐ.— Ավազակնե՛ր։ Թալանչինե՛ր։ Խանութը քա՛նդել են։ Դատի՛ տալ։ Կորչի՛ Սմբատը։ Կո՛րչեն կուլակները։ Եղ տեսակ խանութ չե՛նք ուզում։ Կորչե՛ն...(ուժեղ աղմուկ)։

ՀՐԱՀ.—(աշխատում է խլացնել աղմուկը) Ընկերներ, լռե՛ք։ Լսե՛ք, թույլ տվեք՝ վերջացնեմ...

ՁԱՅՆԵՐ.— (ավելի կամաց)։ Կորչե՛ն ավազակները, անիծված վոչիլները։ Մեր արյունն են ծծել։

ՀՐԱՀ.—Ճիշտ է, ընկերներ, այդ վոչիլները ձեր արյունն են ծծել, բայց մեղավորը դուք եք։ Կուլակներին վարչության անդամ չպետք է ընտրեիք։ Հիմա արդեն խանութից վոչինչ դուրս չի գա՝ ուշ է...վարչությունը պետք է վերընտրել... վարչության մեջ պետք է ընտրել չքավորներին ու միջակներին։ Կանանց նույնպես պետք է ընտրել... կինն էլ պիտի վարժվի հասարակական աշխատանքին... կինն ընտանիքում ամբողջ տնտեսությունն է կառավարում...նա ամեն մի կոպեկի վրա դողում է—կոոպերատիվում նրան առաջին տեղը պիտի տալ, վորպեսզի կոոպերատիվի հարստությունը չվնասվի... ինչ վոր վերաբերում է խանութի պակասորդներին՝ յես առաջարկում եմ հին վարչությանը դատի տալ և կոոպերատիվի ոգտին նրանցից առնել ամբողջ պակասորդը, իսկ իրենց բանտ նստեցնել։



ՁԱՅՆԵՐ.—Ճի՛շտ է։ Ուղի՛ղ է։ Դատի՛ տալ մեր արյունը ծծողներին։ Կորչե՛ն մեր արյունը ծծող վոչիլները։

ՀՐԱՀԱՆԳ.—Ճիշտ է, ընկերներ։ Վոչիլներից ազատվելու մի՛ միջոց կա։ Յեթե վոչիլը կծում է քեզ՝ վերցրած գցիր ու վոտքով ճզմիր։

## ՏԵՍԱՐԱՆ 5

Ներս է վազում ԿԻՄԸ, մոտենում է սեղանին և բացականչում.

ԿԻՄ.—Քեռի՛, Սեթոյին սպանեցի՛ն...

(Անմիջապես տիրում է լռություն, հետո՝ բոլորը վազում են դեպի Կիմը, իսկ Պետիկը վազում է դեպի բեմի հետևը)։

## ՏԵՍԱՐԱՆ 6

ՁԱՅՆԵՐ.—Վորտե՞ղ։ Ո՞վ սպանեց։ Վո՞րտեղից գիտես։ Ո՞վ տեսավ։ (Քննիչն ամբոխը ճեղքելով, մոտենում է Կիմին)։

ՔՆՆԻՉ.—Պատմիր տեսնեմ, թե ի՞նչպես յեղավ։

ԿԻՄ.—Ճիշտ եմ ասում, քեռի ջան...իմ աչքով տեսա...ձին եկավ՝ Սեթոն չկար...տեսնեմ նա յել սայլի վրա պառկած ա, տնքում եր, պարկի մեջ փաթաթված եր ու արյուն եր գալի...

ՔՆՆԻՉ.—Նշանակում է կենդանի՞ յեր...

ԿԻՄ.—Կենդանի յեր, բայց շատ չեր...

(Քննիչը դուրս է վազում. գյուղացիներն ու կանայք նրա հետևից)։

## ՏԵՍԱՐԱՆ 7

Բեմի վրա մնացել են ՍՄԲԱՏՆ ու ՄԱՐԳԱՐԸ

**ՍՄԲԱՏ**.— (շարունակ հարբած ձևանալով) *Էդ վո՞նց ա, վոր սաղ ա մնացել...*

**ՄԱՐԳԱՐ**.—*Ե՛հ, քու...նու, ի՞նչ անենք...կորանք... փախի, քանի յետ չեն դարձել...տանդ յես մոտիկ կտամ*:

(Սմբատը հետ ե դառնում և վազում ե դեպի բեմի խորքը, ցանկապատի կողմը· Յերբ նա հասնում ե ցանկապատին, բեմ են վազում քննիչն ու Պետիկը նրանց հետևից ել ամբոխը):

## ՏԵՍԱՐԱՆ 8

**ՔՆՆԻՉ**.—*Կանգնի՛ր, կը կրակեմ...*

**ՍՄԲԱՏ**.— (վոտքը բարձրացրել ե ցանկապատից, վոր թռչի):

**ՊԵՏԻԿ**.—*Ա՛ա, ո՛ձ անիծված, չե՛ս փախչի...* (վազում ե դեպի նա, բռնում ե վոտքից, ցանկապատից ցած ե նետում, Սմբատի ձեռում փայլատակում ե դանակ, վոր նա բարձրացնում ե Պետիկի վրա):

**ՔՆՆԻՉ**.—*Զգո՞ւյշ...դանա՛կը...*

**ՊԵՏԻԿ**.—(Սմբատին մի կողմ ձգելով, ինքը մի կողմ ե թռչում՝) *Դանա՛կ...ինձ ե՞լ ես ուզում սպանել, վոնց վոր Սեթոյին...*

**ՍՄԲԱՏ**.— (վեր յելնելով՝ հարձակվում ե նրա վրա)։ *Ա՛ռ, թե վոր ուզում ես*...(նորից բարձրացնում ե, վոր խփի, Պետիկը խույս ե տալիս):

**ՔՆՆԻՉ**.—(Կրակում ե)· *Բռնեցե՛ք, բռնեցե՛ք...*

**ՍՄԲԱՏ**.—(դանակը նետում ե, և ձեռքի ցավից դեմքը ջղաձգում ե)· *Ա՛ ա՛ ա՛...*

**ՊԵՏԻԿ**.—(Հարձակվում ե Սմբատի վրա—նրա հետ և ամբոխը) *Դե՛հ, վոչիլ անիծված, հիմի հո ազատ—վեցինք· քո իշխանությունից...*

(ՎԱՐԱԳՈՒՅՐ)

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна

## ՀԱՆՁՆՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

(Թարգմանական)

1. **Չայանով**.— *Կոոպերացիայի համառոտ դասընթաց*։
2. **Մակերովա**.— *Սպառկոոպերացիայի անցյալն ու ներկան*։
3. **Շալով**.—*Հաշվապահության համառոտ ձեռնարկ*։
4. **Կոժանեի**.—*Ինչ պետք ե իմանա ամեն մի բանվոր*։
5 **Կույբշեվ**.— *Լենինն ու կոոպերացիան*։

---

*«Վոջիլների դեմ կռվելու միջոցը» պիեսի յերգերը յերգվելու են «գեղեցկորի», «ջան գյուլում», «Մեր Աշխենի թշի խալը» յեվ «Համբարձում յայլա» յերգերի յեղանակով*։

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0303564

Գ Ի Ն Ն  25  ԿՈՊ.